Մուրացան

Նոյի ագռավը

Դ

Վեղունց բակը մտնելով՝ մենք ոչ ոքի չպատահեցանք: Այդտեղ լռություն էր տիրում: Եթե գոմի դռան մոտ կապած ուլը չլիներ, որը թե առջևի թափած խոտը ուտում և թե մեզ էր նայում, այլև պառավ, ուժազուրկ շունը, որ սրահի շքարանից ելնելով՝ մի երկու բերան ծուլաբար հաչեց և ապա նորեն բակի մեջ ընկած հին սայլի տակը մտավ, մենք կկարծեինք, թե այս տան մեջ կենդանի շունչ չկա: Բոլոր նշաններից երևում էր, որ մի օր այդ հարկը շեն ու փարթամ է եղել, որովհետև բացի շքեղ սոսիներից, որոնք նրա բակի մի մասն էին բռնում, տունն էլ, ըստինքյան, գրավում էր ընդարձակ տեղ և շինված էր հարուստ գյուղացու ճաշակով: Նա բաղկացած էր մի մեծ, բարձրաշեն օդայից և երկու ուրիշ, նույնպես բարձրադիր սենյակներից: Նրանց մեջտեղում գտնվում էր ընդարձակ, սյունազարդ սրահ: Վերջինի սյուները տաշված էին կաղնու հաստ գերաններից և ունեին, մինչև անգամ, խոյակներ, որոնք թեպետ ծխից ու հնությունից սևացած, այսուամենայնիվ, իրենց վրա կրում էին հյուսնի ձեռքերի ճարտարության նշաններ, այն է զանազան քանդակներ, որոնք ներկայացնում էին կենդանիներ, բույսեր և այլ նկարներ: Բակի, գոմի և հորթանոցի ընդարձակությունը ցույց էր տալիս, որ այդ տունն ունեցել է մի օր բազմաթիվ անասուններ: Իսկ թոնրատան՝ տնից հեռու գտնվելը, արդեն ապացույց էր. որ Վեղունք շեն օջախ լինելով՝ միշտ ունեցել են հյուրեր, որոնց ծխից ազատ պահելու համար թոնիրը ոչ թե ուրիշների պես տան սրահում, այլ բակի մի անկյունումն են զետեղել: Չնայելով այս բոլորին, այսուամենայնիվ, երևում էր՝ ոչ միայն նախկին կյանքը չէր եռում այդ տան մեջ, այլև մի ավերիչ ձեռք ծանրացել է նրա վրա: Որովհետև տան կտուրը

մի կողմից արդեն ծռվել էր, իսկ բաշերի հողը մի քանի տեղ թափվել: Երկու սենյակների պատուհանները մեծ մասամբ ապակիներից զուրկ՝ ծածկված էին ձեթած թղթով, գոմի դուռը կրնկահան եղած ընկած էր պատի տակ, իսկ հորթանոցը, մինչև անգամ, զուրկ էր այդ բանից:

Այստեղ մարդ չէ երևում, վերադառնանք, ասացի ընկերոջս:

Չէ, թող մի անգամ էլ հնչակը քաշենք, գուցե մեկը երևա, պատասխանեց նա:

Հնչակը ո՞րն է, հարցրի ես զարմանալով:

Գյուղացու հնչակը, չգիտե՞ս, սա է, այ, տես՝ ինչպես լավ է հնչում: Այդ ասելով նա գետնից մի քար վերցրեց և նետեց սայլի տակ պառկած շան վրա: Վերջինս վեր կացավ տեղից և այս անգամ սկսավ հաչել ավելի աշխույժով: Մի քանի րոպեից, արդարև, օդայի դուռը բացվեցավ և այդտեղից դուրս եկավ աղքատ հագնված մի պառավ, որը հուշիկ հառաջանալով, մոտեցավ ու կանգնեց սրահի այուների մեջտեղը: Սա մոտ վաթսուն տարեկան կին էր, միջահասակ ու վտիտ մարմնով, խորշոմած երեսով, կկոցված աչքերով՝ բայց դեմքի բարի ու միամիտ արտահայտությամբ:

Տեսնելով մեզ բակում, նա ձախ ձեռքով հովանի արավ աչքերին՝ կարծես, աշխատելով ճանաչել մեզ և ապա հարցրեց.

Ո՞ւմ եք ուզում:

Վեդունց Սարգսի տունը սա՞ է, հարցրի ես, իբր չճանաչելով:

Հա, էս ա, պատասխանեց պառավը:

Սարգիս ապերը տա՞նն է:

Հրեն բախչումը (պարտեզ) ծառի տակ բհում (փորում) ա:

Բախչան ո՞րտեղից գնանք, հարցրի ես:

Այ, կյումի կողքով վեր անցեք, դուռն ընտի ա, հայտնեց պառավը:

Հազիվ թե մենք շուռ եկանք, նա ավելացրեց,

Ամոթ չըլի հարցնիլը, դուք հո՞վ եք:

Օտար մարդիկ ենք, եկել ենք ձեր գյուղը տեսնելու. – ասացի ես:

Բա որդիան եք գալի, հետաքրքրվեց նա:

Շատ հեռու տեղից, պատասխանեցի ես:

Էլ հա, հո աշխարհքի էն ճնդիցը (ծայրիցը)չեք գալի, մին ասացեք տեսնամ՝ ո՞ր շհարից եք:

Ես Թիֆլիսից եմ գալի, իսկ իմ այս ընկերը՝ Մոսկովից:

Դու Թիֆլիսից ես գալի, վա՛յ, քե մատաղ ըլեմ, բա խի՞ շուտ չես ասում... Այս խոսքերով պառավը մոտեցավ և ձեռքը տալով ինձ ողջունեց այնպես սիրով, որ ասես թե, յուր քեռորդուն, կամ որևէ հարազատին էր պատահել, և ապա հարցրեց. Մի ասա, քե մատաղ, մեր Վանուն էլ (Հովհաննեսին) տեսար:

Ձեր Վանո՞ւն... կներես, նանի, չեմ ճանաչում, ասացի:

Ճանաչում չե՛ս... բա մեր Վանուն արարած աշխարհը ճնաչում ա, էդ ո՞նց ա, որ դու ճնաչում չես:

Ո՞րտեղ է լինում:

Սուդումն ա ըլում, քե մատաղ, ատվակատ ա, գողերին ու մարդասպաններին նա ա Սիբիրից ազատում: Դու խի՞ չես ճնաչում:

Պառավի վերջին տեղեկությունը օգնեց հիշողությանս:

Այո՛, այո՛, ճնաչում եմ, այնտեղ նրան Վեդով են ասում:

Հա, քե մատաղ, ո՞նց ա, սաղ, սալամա՞թ ա:

Տեսել եմ, նանի, շատ առողջ է, միամիտ եղիր, ապահովացրի պառավին:

Մատաղ ըլեմ քո աչքերին, էս ա՝ հինգ տարի ա, երեսը տեսել չեմ… քոռանա ինձ նման մերը, ասաց պառավն ու լացակումեց:

Ինչո՞ւ չես տեսել, այստեղ չի՞ գալիս, հարցրեց Պետրոսը:

Չէ, քե մատաղ, գալիս չի: Ասում ա՝ գամ գեղումն ինչ շինեմ: Ասում եմ, որդի, եկ, կողքիս նստիր, սկի բան մի շինիլ, եկ, որ ամեն օր էրեսդ տեսնեմ, բոյիդ բուսաթիդ յաշեմ… Ախր աչքումս մազ ա կանաչել, որ քե էդ օրին եմ հասցրել... Ասում ա, նանի, ասիլ մի, էդ ըլելու բան չի:

Վերջին խոսքերի հետ՝ արտասուքի կաթիլները գլորվեցան պառավի խորշոմած դեմքի վրա: Նա գլխափաթաթի ծայրով աչքերը սրբեց.

Ինչու ես լաց լինում, նանի, որդիդ, փառք աստծո, ողջ առողջ է, գործն էլ հաջողակ, քո ուզածն էլ այդ պիտի լինի, սիրտ տվի ես պառավին:

Հա, քե մատաղ, բա ի՞նչ ա. որտեղ ըլում ա ըլի թաքի (միայն թե) սաղ ըլի... Ի՞նչ անեմ, թե ես ըստի իրա կարոտը քաշում եմ… պատասխանեց պառավը, աշխատելով յուր վիշտը ծածկել: Բայց մի փոքր հետո ավելացրեց, Շատ վախտ ա գիր չենք ստացել, աստված պահի քե, որ իմ Վանուցը խեր խաբար (բարի լուր) բերիր… Ապա տեսնելով, որ ընկերս շարժվում է դեպի առաջ, ասաց, կուզե՞ք, ըստի էյվանումը նստեցեք, ես գնամ մեր հալևորին կանչեմ:

Չէ, նանի, մի նեղանար, մենք ինքներս կերթանք, ձեր բախչեն էլ կտեսնենք, ասացի ես և ողջունելով պառավին, առաջ անցա Պետրոսի հետ:

Այս ի՞նչ հանելուկ է, հարցրեց վերջինս, երբ մենք հեռացանք: Այս մարդը տեր Մակուչին խորհուրդ է տալիս անուսում թողնել իր չորս որդիներին, մինչդեռ ինքն յուր որդուն բարձր կրթություն է տվել և փաստաբան շինել:

Այդ հանելուկը լուծելու համար մենք պիտի մի փոքր էլ համբերենք՝ ծերունուն լսենք, պատասխանեցի ես: Պետրոսը ոչինչ չխոսաց, և մենք միասին պարտեզ մտանք:

Դա մի ընդարձակ տարածություն էր, որի մեծ մասը ծածկում էին մի քանի շարք պտղատու ծառեր, այն է՝ խնձորենիներ, տանձենիներ, սալորենիներ և սերկևիլներ, ամենքն էլ, գրեթե, պտուղներով ծանրաբեռնված:

Պարտեզի վերջում մի մարդ, գլուխը կապույտ թաշկինակով կապած փորում էր կիսաչոր մի դեղձենու շուրջը:

Անշուշտ սա է Վեղունց Սարգիսը, ասացի ես Պետրոսին և նրա հետ միասին առաջացա դեպի նրան:

Սա հաղթանդամ, բարձրահասակ, բայց մի փոքր կորաքամակ ծերունի էր, մոտավորապես յոթանասուն տարեկան: Թաշկինակով կապած գլխի շուրջը մազ չէր երևում, բայց ընչացքն ու կարճ մորուքը բոլորովին ճերմակ էին: Նրա դեմքի արտահայտությունը խիստ էր, բայց ոչ չար, իսկ աչքերը, թեպետ ծածկված թավամազ հոնքերով, սակայն ցոլացնում էին խելք և բարություն: Նա հագած էր կոշտ կտավե շապիկ՝ կապույտ նաշուրի օձիքով, իսկ դրա վրայից՝ սև ղադաքի, մի հնամաշ արխալուղ: Վարտիքը, որ կարած էր գյուղում գործված բրդե շալից, ուներ նույնպես մի քանի կարկատան և սրունքների մոտ սեղմված էր սև տոլաններով: Ոտքերին ամրացրած էին հասարակ կաշվի տրեխներ, իսկ մեջքը սեղմած սև կտավի մի գոտիով:

Նշմարելով մեզ մի քանի քայլ հեռավորության վրա, նա իսկույն գործելուց դադարեց և բահը դեղձենու բնին հենելով առաջացավ դեպի մեզ:

Բարի աջողում, Սարգիս ապեր, ասացի ես առաջին անգամ և մոտենալով, ձեռքս պարզեցի դեպի ծերունին:

Ա՛յ, աստծո բարին, բարով եք եկել, պատասխանեց նա ժպտալով և յուր կոշտ աջով մեր ձեռքը թոթվելուց հետո շարունակեց, հավատաս (երևի), դուք եք Սհարանց Մուքու ղոնաղները:

Ամբողջ գյուղն արդեն գիտեր, որ մի օր առաջ հյուրեր են եկել Սհարենց Մուքու տունը, և մեզ, ահա այդ անունով էր ընդունում ծերունին:

Այո, Սարգիս ապեր, մենք ենք:

Բարով եք եկել, հազար բարով, կըլի որ լավ բանի հմար ըլեք եկած, աստոծ աջողի:

Մի առանձին բան չունինք, հենց ման գալու համար ենք եկել:

Ինչ որ ա, բարի ըլի: Աշխարհի շառն (չարն) էնքան շատացել ա, որ մարդ ջուր խմելու հմար էլ թե տեղիցը վեր կենա, պտի աստոծ կանչի, որ բարի ըլի: Ձեզանից ո՞րն ա Մինարենց Ակոբի տղեն:

Ես եմ, պատասխանեց Պետրոսը:

Հա , քու հերը լավ մարդ ա, լավ էլ հայ ա, դադրը (երախտիքը) գիտում ես, պատիվ ես տալի:

Ինչպե՞ս կարող եմ պատիվ չտալ, քանի որ նա իմ հայրն է:

Ի՞նչ գիտամ, էս այամումը ըսկի որդին հորը ճնաչում չի: Էդ շլապեն ում գլխին տեսնում եմ, հենց գիտում եմ հոր տանիցը՝ ջուդա ընկած (տարագիր եղած) ա:

Չէ, ես ծնողներիս շատ եմ սիրում և հենց նրանց տեսնելու համար է, որ Մոսկովից վեր եմ կացել, եկել:

Հա՞, որ ըտենց ա, շատ ապրես, աստոծ պահի քեզ. բարի ժառանգ ըլես. օրհնեց ծերունին և ապա դառնալով ինձ՝ հարցրեց, կբաշխես, քե ճանաչում չեմ, դու ումա՞նցից ես (որոնցից):

Ես էլ տեր Օվանեսի թոռն եմ, պատասխանեցի ես:

Ասատուրի տղե՞ն:

Այո:

Դե շուտ ասա, հեր օրհնած, ախր քու ողորմած հոգի հերը իմ տան լավ բարեկամն ա լել, առանց իրար թիքա չենք կտրել: Քանի-քանի անգամ էս բախչումը նստել, քեֆ ենք արել, քանի անգամ մեր չինարուցը տակին զուռնա-դավալով մարաքա ենք սարքել… Օղորմի քո հոգուն, Ասատուր... ասում

էր, ա Սարգիս, էս չնարիքը, որ քունն ա, լավ կըլի որ տանդ գլխին մին ատած (հարկ) էլ շինես ու առաջը լեն ու բոլ մի թախտապանդ (պատշգամբ), ընենց ըլի, որ չինարուցը ճղները կռանան թախտապանդի վրեն շուք անեն: Էն չախը (ժամանակ), ասում էր, տունդ ամարաթի (պալատի) նման մի բան կդառնա, հենց որ թախտապանդին նստես, էն սարերին մտիկ տաս, յա չէ սարինն (գովը) ընկած վախտը ընտի մի ստաքան չայ խմես, հենց կիմանաս, թե դրախտումն ես: Եվ, իրավ, լավ է ասել, մեզ էլ հենց այսօր ձեր չինարիքն են բերել այստեղ: Ափսոս չէ, որ այդ գեղեցիկ ծառերի առաջ դուք երկհարկանի մի տուն չունիք, հարեցի ես:

Ծերունին նայեց ինձ վրա քննական հայացքով, կարծես ստուգելու համար թե՝ արդյոք յուր սիրտը ցավեցնելու համար ասացի այս խոսքերը: Բայց ես, իհարկե, ասել էի միամտաբար, առանց իմ խոսքերին մի առանձին նշանակություն տալու: Սակայն հետո իմացա, որ դրանք ծերունու սիրտը խոցած պիտի լինեին:

Լավ ես ասում, որդի, լավ կըլեր, որ շինի, ամա ինչ անես, որ…

Հա, ինչո՞ւ չշինեցիր:

Ծերունին փոխանակ պատասխանելու, նայեց յուր շուրջը, ապա դառնալով մեզ ասաց.

Էս խի ենք ըստի կաղնել, գնանք էյվանումը թախտի վրեն նստենք, եղո կխոսանք: Կբաշխեք, մարդ որ ծերանում ա, մարիֆաթով (քաղաքավարությամբ) ժաժ գալն էլ ա մոռանում... գնանք, ըսենց կաղնած կնեղանաք:

Չէ, Սարգիս ապեր, այստեղ ավելի լավ է, այ, այս սիրուն ծառի տակը կնստենք, ասացի ես:

Լավ, որ ըտենց ա, թող մի խալիչա բերեն... Ախչի, հե՛յ, ա Սավգյուլ, մի խալիչա ղրկի ըստեղ, ձայն տվավ ծերունին դեպի տան կողմը:

Մի քանի րոպեից հետո, մի փոքրիկ, աղքատ հագնված աղջիկ, մի հին գորգ քաշ տալով բերավ փռեց ծերունու ցույց տված տեղը: Վերջինի հրավերով մենք նստանք գորգի վրա:

Հա, ասում ես թե՝ խի չշինեցիր, շարունակեց ծերունին ընդհատված խոսակցությունը, լավ ես առում, որդի, որ շինած ըլեի, հմի էս ա որ եկել եք, կտանի ու կնստեցնի ձեզ էն հովահար թախտապանդումը ու մի թիքա հաց կդնի առաջներիդ... ամա դե կարացի ոչ...

Երևի փող չունեիք, հարցրեց Պետրոսը:

Փո՞ղ... ընչի չունեի, փող էնքան ունեի, որ մի ատաժ չէ, երկուսն էլ կշինեի:

Հապա ինչո՞ւ չշինեցիր, հետաքրքրվեցա ես: Նոյի ագռավը չթողեց, որդի, նոյի ագռավը:

Նոյի ագռավը:

Հա՛:

Ո՞րն է Նոյի ագռավը, հարցրի ես զարմանալով:

Նոյի ագռավը գիտում չես՝ որն ա:

Ոչ:

Բաս դու սկի հուսումնարանում կարդացել չե՞ս:

Կարդացել եմ:

Դե, էն ա՝ վարժապետը ասած կըլի, թե հով ա Նոյի ագռավը, էլ խի ես ասում՝ գիտում չես:

Ջրհեղեղի ժամանակի Նոյի ագռավն ես ասում:

Հա , բա էլ ուրիշ ի՞նչ նոյի ագռավ կա:

Այն ագռավն է, որ չի թողել քեզ տունդ շինելու:

Հա՛, հենց համին (իսկ և իսկ) էն ագռավը:

Ես դժվարությամբ էի ծիծաղս զսպում, իսկ Պետրոսը արդեն քահ-քահ ծիծաղում էր:

Խի՞ ես ծիծաղում, որդի, հարցրեց ծերունին ընկերիս:

Հապա ինչ անեմ, որ չծիծաղեմ, ասում ես՝ նոյի ագռավը չի թողել, որ տունդ շինես: Առաջինը ագռավը ոնց կարող է արգելել քեզ քո տունը շինելու, երկրորդ՝ Նոյի ագռավը մինչև այսօր ապրո՞ւմ է, որ քեզ արգելի:

Բաս չի՞ ապրում:

Իհարկե, ոչ:

Ծերունին ժպտաց: Սակայն նրա այդ ժպտի մեջ այնքան ծաղր կար, ուղղված դեպի ընկերս, որ ես չկարողացա իմ հետաքրքրությունը զսպել:

Բացատրիր, աղաչում եմ, ի՞նչ ագռավ է այդ, կամ ո՞ւմն ես դու ագռավ անվանում, խնդրեցի ես:

Առաջ դու ինձ ասա՝ էդ ագռավի պատմությունը գիտո՞ւմ ես, թե չէ:

Ինչպե՞ս չէ:

Դե պատմիր:

Ի՞նչ պատմեմ, ջրհեղեղի պատմությո՞ւնը:

Չէ, էդ ես քեզանից լավ եմ իմանում: Չասես թե՝ Սարգիս ապերը գեղացի ա, զատ չի գիտալ: Վանքումը իրեք տարի կարդացել եմ, իրեք տարի էլ կեսդերություն (տիրացություն) եմ արել: Աստվածաշունչը երկու անգամ անց եմ կացել (կարդացել եմ):

Ուրեմն միայն ագռավի պատմությո՞ւնն ես ուզում:

Հա՛:

Էհ, նա մեծ պատմություն չունի: Երբ Նոյի տապանը Արարատ սարի վրա կանգնեց, այդ ժամանակից քառասուն օր անցած՝ Նոյը տապանի պատուհանը բացավ և դուրս թողեց ագռավին, որպեսզի իմանա, թե ջրերը ցամաքել են, թե ոչ: Բայց ագռավը գնաց, ետ չդարձավ:

Խաբար չբերե՞ց Նոյին:

Այո՛:

Բա խի՞ ետ չդարձավ:

Հայտնի չէ. դրա համար աստվածաշնչումը բան չկա գրած:

Գիտում եմ բան չկա գրած, ամա դու ի՞նչ ես փիքր անում, խի ետ չեկավ:

Ագռավը ծանրամարմին թռչուն է, երևի շատ թռչելուց հոգնելով՝ ընկավ ջրի մեջ ու խեղդվեցավ, հարեց Պետրոսը:

Հը՞... ժպտաց ծերունին,(էդ ա ձեր հուսումնարանումը ըդենց խամ են թողնում ձեզ, է՛, ագռավը խեղդվո՛ղ ջանավար (գազան) ա:

Ապա, ձեր կարծիքով, ինչո՞ւ չվերադարձավ, հարցրի ես:

Նրա համար, որ քերձերի գլխին, յա չէ, սարերի դոշին մարդի, յա հեյվանի ջամդաք (լեշ) տեսավ, վրան ընկավ ու սկսեց լափիլը: Խի, ագռավը մտածելու էր, թե ընտեղ տապանումը Նոյը, աչքը ջուր կտրած (ակնկառույց)՝ իրան ա ըսպասում:

Կարելի է՝ այդպես է:

Ոչ թե կարելի ա, հենց դրուստ էս ա որ ասում եմ:

Թող այդպես լինի, միայն ասա տեսնենք՝ այդ ագռավն ինչպես արգելեց քեզ քո տունը շինելու, հարցրի ես:

Ինչպե՞ս արգելեց, մի քիչ մաջալ (միջոց) տու, ասեմ:

Այս խոսքերով ծերունին գլխի թաշկինակը հանեց և կոշտ ձեռքով ճաղատ գլուխը շոյելով ու զովացնելով՝ շարունակեց.

Գիտո՞ւմ եք, ի՞նչ կա: Աշխարհումս առանց աստծու բան լի ըլում: Ըսկի տերևն էլ ծառիցը տափը չի ընկնում: Հալբաթ էս էլ աստծու կամքն էր, որ ըսենց ըլավ:

Ծերունին դարձյալ լռեց, ապա նորեն գլխի թաշկինակը կապելով շարունակեց:

Ինչ որ պտի պատմեմ, հնուց բան ա, կըլի որ քսանհինգ տարի ըլի, յա չէ էրսուն, էն չախը ես հլա բաբաթ (բավական) ջահել ի: Մի օր Օսեփ վարդապետը եկավ մեր տուն: Օսեփ վարդապետի անումը լսած կա՞ք, հարցրեց ծերունին:

Ո՛չ, պատասխանեցի ես:

Հա, լսած չեք ըլի, դուք ջահել եք: Նրա մեռնիլը, հավատաս, տասը յա տասներկու տարի ըլի: Աստոծ հոգին լուսավորի, արդար մարդ էր, ասիլ (ազնիվ) հոգևորական: Վանքի վանահայրն էր. շուտ-շուտ կգար մեր տուն. կնըստինք էս ծառերի շուքումը, զրից կանինք: Օղորմած հոգի քու հերն էլ շատ կսիրեր նրան: Էն ա մի օր եկավ տեսավ, որ գերաններ եմ բերել տվել, որ տախտակ քաշել տամ. գեղականի հետ էլ խոսում եմ, որ քար ու կիր բերի: Ա՛ Սարգիս, ասեց, էդ ընչի համար ես թադարիք (պատրաստություն) տեսնում: Հայր սուրբ, ասեցի, ծառա եմ քե, ուզում եմ տանս գլուխը շինել տալ: Մեր աղա Ասատուրն էլ ա խորհուրդ տալի: Ես էլ տեսնում եմ, որ լավ կըլի: Ափսոս ա, որ էս լաչին (գեղուղեշ) չնարուցը առաջին երկու ատաժանի մի տուն չըլի, որ եկող գնացողը նրա հովհար թախտապանդումը նստի, մի սհաթ էլ ա քեֆ քաշի: Էս խոսքի միջումը մեր Վանին հորթի եդից վազելով՝ եկավ, որ մեր մոտիցը անց կենա՝ թե ինչ ա, հորթի առաջը կտրի, բռնի ու վրեն նստի: Էն չախը նա հլա տասը տարեկան էր: Էն ա հայր սուրբը ռեխի ձեռքը բռնեց ու ասեց.(ա Սարգիս, գիտաս ի՞նչ կա, տանդ գլուխը մի շինիլ. այ, սրա գլուխը շինիր: Էն փողը, որ խարջելու ես, թե ինչ ա՝ տանդ վրան մի ատաժ ավելացնես, լավն էն ա, որ խարջես ու էս ռեխի գլխումը ուսում ու գիտություն մտցնես: Ասեցի՝ հայր սուրբ, ռեխին հո անուսում չեմ թողնիլ. մի քիչ վախտից եդը վանքը պտեմ դրկիլ, որ լավ կարդալ սովրացնես: Վա՛յ ինձ, հենց գիտում ի թե՝ հայր սուրբը նրա համար ա ասում, որ ռեխին իրա մոտ դրկեմ, հինչ ա մեզանե խերվի (օգտվի): Ամա

օղորմած հոգին պատասխանեց. ա Սաք, ասեց, ես ի՞նչ հուսում յա գիտութին ունեմ, որ դրան ինչ տամ: Հրեն դարկի Թիֆլիս, գիմյազումը կարդի, լավ հուսում ստանա: Ընդիան եդն էլ դրկի Մոսկով, յա չէ Պետրպոլկ, որ ունիվերս մտնի, ընտեղի մեծ հուսումն էլ առնի, փիլիսոփ դառնա: Էն չախը կգա, էս գեղի միջումը մին հատ մարդ կըլի: Համ իրա ձեռովը տանդ գլուխ կշինի, համ էլ միջումը հուսումնարան կբանա, խեղճ են էս գեղըցիքը, խավար մնացել են, խավար էլ պտի մեռնեն, սրանց ռեխեքը կհավաքի, հուսում կտա, ու մի քանի տարեն ետը սաղ գեղը կլուսավորի: Էս բանը համ աստծուն դուր կգա, համ բանդին (մարդկանց): Հայր սուրբն էս որ ասեց, խելքումս նստեց: Ասեցի, հայր սուրբ, լավ ես ասում, թող տանս գլուխը հին մնա, ինձ հո՞վ ա տնազ անելու (ծաղրելու), թաք ըլի՝ իմ Վանու գլուխը զարդարվի: Ասենք, ինչ մեղքս ծածկեմ, ես էլ հենց էն գլխիցը հուսում ի ու գիտության գերի էի: Երբ մի հուսումնական մարդ կգար մեր գեղը, ում տան էլ որ վեր գար, կգնայի զոռով ղոնաղ կբերի մեզ մոտ, թե ինչ ա, աշխարհի էն լավ-լավ բաներիցը մին էրկու բերան խոսա, լսենք, բան իմանանք: Մեր հայր սուրբը մի լավ Չամչյան ուներ: Նրա համար շուտ-շուտ վանք կգնայի, թե ինչ ա, կշտիս նստի, մին-մին գլուխ կարդա: Էն Հայկի, Արամի, յա չէ Վարդան զորավարի լավ-լավ պատմութինը, որ կլսի, հոգիս կմխիթարվեր: Շատ վախտ էլ սիրտս էն հանգի կլցնվեր, որ լաց կըլեի, ու արտասուքս ջրի նման կթափվեր: Ինչ երկարացնեմ, տեսա, որ հայր սուրբի խորհուրդը լավն ա, վճռեցի որ տանս շինությունը թողամ ու ռեխին Թիֆլիս ղըրկելու թադարիքը տեսնամ: Երբ որ էս բանը մեր տնացուն (կնոջը) ասեցի, քիչ մնաց, որ խեղճը խելքիցն ընկնի: Ինչ լաց, ինչ շիվան, ինչ գլուխ թակիլ: Ա մարդ, ասում ա, էդ խի ըտենց անաստոծ բան ես բռնում, բա, մենք ճար ու ճրագ մի տղա ունենք, էն ոնց վեր ունինք, ղրկենք ղարիբ տեղ ու մենք երկու հոգի, մնանք ըստի բայդուշ. ա կնիկ, ասում եմ, տղին հո ծախում չենք, ղրկում ենք, որ հուսում առնի, մարդ դառնա ու էլ նոր եդ գա, մեր օջախը լուսավորի: Ղորթ ա, էս ասում ի, ամա մեր օղլուշաղին (կնոջը) էլ ոնամիշ անիլ (մեղադրել) չէր ըլիլ: Ախր աստոծ մեզ չորս ռեխա էր տվել ու էլ ետ իրեքին տարել, մին էդ էր մնացել, որ դիփունանցից պուճուրն (փոքրն) էր: Ի՞նչ մեր ըլեր, որ լսեր, թե իրա մինուճար ռեխին ուզում են ձեռիցը խլել, ջանը կրակը չգցեր, որ տանեն: Կնիկարմատը, ղորթ ա, խելքը կարճ ա, ամա սիրտը բարակ ա, ըսենց ցավին դժվար ա դիմանում: Նրա համար լավ ա, որ իրա տղան սաղ սալամաթ իր աչքի առաջը կանգնած ըլի, թեկուզ հենց չորբան (հովիվ), յա հորթարած ըլի, քանզ գնա, երկրե երկիր, հուսում առնի, յա

փիլիսոփա դառնա: Ամա դե ես տնացոց լաց ու շիվանին մտիկ չարի, իմ թադարիքը տեսա ու Վանին իմ ձեռքովը տարա Թիֆլիս, թափշուր արի (հանձնեցի) մեր կնքավորի տղին: Նա էլ ընտեղ լավ վաճառական էր, ծանոթ բարեկամ ուներ, ռեխին պատրաստել տվավ ու մի տարեն եղը գիմյազը տվավ, որ ռեխան գշեր-ցերեկ ընտեղ մնա, համ էլ կարգի:

Էդ օրից դենը Վանին դառավ իմ դարդն ու ղեիդը (ցավն ու հոգսը): Ղորթ ա, ռեխին սաղ սալամաթ թողեցի եկա, ամա օր ու գիշեր հենց նրա վրեն ի մտածում: Յարաբ, ասում ի, ռեխաս հո չմրսեց, յա չհիվանդացավ: Յարաբ, յադի (օտար) տանը ռեխի սիրտը հո չկոտրվեց: Ես որ մինն ասեմ, ինսան ենք, էլի՞, մտածմունքը աստոծ մեզ ա տվել: Ամա ինչ որ նրա մերն էր անում, բերանով ասվիլ չի ըլի: Խեղճը ոչ գիշեր քուն ուներ, ոչ ցերեկը դարար (հանգստություն): Տափը, ասես, տեղ չէր տալի, որ նստի, էն ա ամեն մի ներս ու դուրս անիլով ընենց էր ախ քաշում, որ ասես ջիգյարը պոկ ա գալու: Ռեխի սիրած շունը, որ տեսնում էր, թե հոտոտելով դեսուդեն ա գնում, ասում էր Ղաթար, Վանու՞ն ես մանգալի, ըստի չի, քե մատաղ, էն ա՝ օխտը սարի քմակին, ասում էր ու լաց ըլում: Նախիրը որ հանդումը եդանում էր, հորթերը բռանչում ին, ասում էր. ջա՛ն յարաբ իմ ռեխեն էլ ձեզ նման անսեր մնացած բռանչո՞ւմ ա, ու ձենը լսող չկա... Եփ որ մտնում էր էս բախչեն հու տեսնում ծառերը տանձ ու խնձորով լիքը, ասում էր ձեր աչքը քոռանա, էդ ո՛ւր եք ըդենց կանանչ-կարմիր լցվել, ճոնքոտել (ծանրաբեռնվել), ախր որ Վանին ըստի չի՞, խի՞ չեք չորանում, վեր թափում: Խուլասա (վերջապես) ես որ մինն ասեմ: Շատ վախտ էլ ականջներս ծածկում ի հու փախչում, ինչ ա խեղճի լացն ու արտասուքը չտեսնեմ: Գիտո՞ւմ եք, ծնող ըլիլը հեշտ բան չի. ռեխի տեր պտի ըլեք, որ էս ցավը քաշեք հո: Իմանաք, թե ինչ դժար բան ա: Ամա դե ես էլի դիմանում ի. ռեսանց ընցնում չի, հլա Սավգյուլին էլ սիրտ ի տալի, ասում ի, աղջի, ըտենց վրվթալ (մրմնջալ) մի: Էս ա՝ ռեխան հուսումը կպրծնի կգա. էնչախը ուրախութինդ տասնապատիկ կըլի: Ղորթ ա, հմի նեղութին ես քաշում, ամա դե էն վախտը, որ տեսնես, թե քու տղեն գեղի միջումը մին հատ ա, ու դիփունանք նրա զուլումն են (ծառայությունում) կանգնած, տեսնես, որ սրանց էլ հերերն ու մերերը նրա արևովս են երգում ուտում, սիրտդ կփառավորվի, քաշած ցավերդ կմոռանաս...: Խեղճ կնիկը, ղորթ ա, էս խոսքերով մին օր հանգստանում էր, ամա էլ էգսը իրա ցավն իրա հետ էր:

Վրա էրկու ամառն էր գնում, որ մենք մեր օրերը ըսենց դժվարութինով անց ինք կացնում: Մին օր վանքումը Օսեփ հայր սուրբին տեսա: Հա՛, մոռացիլ ի ասեմ ձեզ, թե էն օրից, որ Վանին տարել ի Թիֆլիս, հայր սուրբն իրա ոտը մեր տանից կտրացրել էր: Չուն լսել էր, որ Սավգյուլն ասել ա թե՝ «իմ ռեխին էդ սևագլուխը դարիբութին գցեց, էլ իմ աչքը դրան տեսնա ոչ»: Խեղճն էն ա՝ սրա հմար էլ մեր տուն չէր գալի: Էդ օրը, վանքում պտահեցի, ասեցի. «Հայր սուրբ, մատաղ ըլիմ կարգիդ, ախր մեր տանեցին ինձ դինջութին (հանգստություն) չի տալի, կարում չի դիմանա: Չի՞ ըլի, որ Վանուն էլ եդ բերել տանք»: Ասեց՝ ա Սաք, խելքդ կորցրե՞լ ես, բա ռեխեն անջախ (հազիվ) ա հուսումի վրեն տաքացել, բերում ես, որ ինչ անես, չոբան պիտի շինես: Ասեցի բա ո՞նց անենք, որ մոր սիրտը դիմանում չի: Ասեց, հեր օրհնած, դե էն ա՝ տարին իրեք ամիս պռազնիկ ա. խի չեք էն վախտը բերել տալի: Ես էլ, ի՞նչ մեղքս ծածկեմ, պռազնիկի բանը սկի լսել չի: Ասեցի, հայր սուրբ, պռազնիկը ի՞նչ բան ա: Ասեց՝ ըսենց, ըսենց, ըսենց: Վա՛յ, աստծու խեր խաբարը քե, ասեցի, հայր սուրբ, բա էդ խի՞ մինչև հմի ասել չե՞ս: Դե շուտ մի գիր գրի մեր կնքավորենց տղին, որ ռեխին ղրկի: Էս որ ասում եմ, մայիսի միջումն էր: Էն ա հայր սուրբը, աստոծ հոգին լուսավորի, գիրը գրեց ու մի քսան օրից ետը ռեխան էկավ:

Դե հմի դուք ըստեղ պտի ըլեիք, որ տեսնիք թե՝ մերը ոնց էր գնում տղի առաջը: Ըսկի մոռանալ չեմ: Իրիկվան չախրն (դեմն) էր. նախիրը նոր էր հանդիցը էկել: Սավգյուլը կովկիթը ձեռին՝ Սոնա անումով մի սիրուն կով ունինք, նրա առաջը չոքած՝ կթում էր: Հենց որ չլսեց, որ ռեխան գալիս ա, կովկիթը ձեռեն վեր գցեց, ու գժի նման վազ տվավ:

Սավգյուլ, Սավգյուլ, աղջի, էդ ո՞ւր ես վազ տալիս, ռեխեն հլա հեռու ա, կանչեցի եդիցը, ամա լսեց ոչ: Աղջի, կացի, ես էլ գամ, մենակ գնալ մի, բղավում ի եդիցը. ամա Սավգյուլի ականջումը որ թոփ էլ տրաքեր, լսելու չէր: Ճարս կտրեց, ես էլ վեր կացա ու եդիցը վազեցի: Գեղրցիք, բանից բեխաբար (անգիտակ), կտրներիցը յա էյվաններիցը մտիկ են տալի մեզ ու արմանում: Հենց գիտում են թե՝ կնիկս պելացել (գժվել), տանիցս փախչում ա, ու ես էլ եդիցը վազում եմ, որ բռնեմ: Էդ սհաթումն հով էր կանգնելու, թե ինչ ա, նրանց բան հասկացնի: Ինչկլի մին վերստաչափ ըսենց իրար եդից վազ տվինք: Հենց էն ա, էլի (հասարակաց) ճամփին հասուհաս ինք, որ թումբի եդիցը ռեխան ռևաց: Սավգյուլը, որ ինչ կըլի

էն՝ դուշի նման թռչում էր, հու ես եդիցը կարում չի հասնեմ, հմի որ ռեխին տեսավ ոչ, ասես տեղն ու տեղը մեխվեց. «Վանի ջան, բալա ջան, դու եկա՞ր, մայամ (ուրեմն) ես քե տենա՞լ պտի...» ասեց ու ծնկները թուլացած ճամփի միջումը չոքեց: Ռեխան ձիի վրիցը թռավ, վազ տվավ, մոր ճտովն ընկավ: Էլ հով կաա պատմիլ, թե ինչ էր անում ըստեղ մերը տղին: «Վանի ջան, բալա ջան» էր ասում ու գլխիցն ինչկլի ոտը պաչում, լիզլիզատում, թողնում չէր, որ դոշիցը պուկ գա, թե ինչ ա, մի հատ էլ ես խտտեմ (գրկեմ), էրեսիցը պաչեմ, որ սիրտս հովանա... Ուզում էր... ասես, սիրտն էն մնութին (ոռպեին) ճղի ու ռեխեն միջումը դնի, լա չէ, աչքի լիսերն հանի, որ Վանու ոտի տակը գցի... Ի՞նչ երկարացնեմ, էս թահրով ռեխին վեր կալանք, եկանք տուն:

Ծերունին լռեց: Ապա ձեռքը դեպի ճակատը տանելող նորեն գլխակապը հանեց, ճաղատ գլուխը շոյեց և կրկին շարունակեց.

Հմի դուք կասեք, էս հալևորը ինչ ա ըսենց էրկեն բարակ խոսում, մենք ուզեցինք, որ Նոյի ագռավի բանն իմանանք, սա իրա տղի պատմությունն ա կցել:

Չէ, պատմիր, մենք սիրով լսում ենք, ապահովացրի ես ծերունուն:

Հա, ինչկլի հմի պատմեցի թե՝ ծնողն ի՞նչ ցավ ու կրակի մեջ ա ըլում, եփ իրա ռեխին ղարիբութին ա ղրկում: Հմի էլ մի ուրիշ ցավ պատմեմ: Քիչ առաջ, եփ ընկերդ ասեց՝ տունդ խի չշինեցիր, կըլի, որ փող չունիր. ասեցի՝ ինչի չունի, փող էնքան ունեի, որ մինը չէ, էրկու ատամ էլ կշինի, թե որ ուզի: Սրանով ուզում ի ասեմ թե՝ ես հարուստ եմ: Ամա դե գեղական հարստութինն ի՞նչ ա: Մին հազար, յա էրկու հազար մանեթ որ ունենում ա, յա չէ մի քսան, էրսուն գլուխ տավար, մին պուճուր իլխի (ջոկ) ձի, մին քանի ուլախ (գրաստ), էն ա ասում էն, թե մեծ դովլաթի (հարստության) տեր ա: Ես էլ ըտենց հարուստ ի: Եփ Օսեփ հայր սուրբն ասեց՝ փողդ խարջի ռեխին հուսում տու, ես հենց գիտացի թե՝ իմ նաղդ (կանխիկ) փողը բավական կըլի դրան: Ասեցի՝ էն լավ ա՝ իմ Վանին հուսումնական ըլի, քանզ ես հազար, յա էրկու հազար մանեթի տեր: Փողը նրա գլխին մատաղ, իմ բաղն ու բախչեն, իմ տունն ու ջրաղացը, իմ տավարն ու ձիանը, որ ինձ մնան, էն էլ ինձ հերիք ա: Ամա դե որ փողի ճնդիցը կցեցի ոչ խարջի՞լը հեշտ բան չգիտաք գեղականի համար տարին իրեք հարյուր մանեթ գիմյազը փող ղրկի, էն ա տեսա, որ օխտը տարվա մեջ էլած փողս ձեռքես դուրս

էկավ ու ես մնացի դարդակ: Էդ տարին Վանին գիմնազը պրծել էր: Գրեց, թե, ա՛, հեր, ինձ պտիս օգնես, որ գնամ ունիվերս: Էս բանը ինձ փիքրի մեջ գցեց, ընդուր որ տեսնում ի, թե օրս փիս տեղ ա մթնում: Գնացի վանահոր մոտ խորհուրդի: Հայր սուրբ, ասեցի, ախր, ձեռիս փողը դուրս էկավ, ռեխեն էլ գրում ա թե ինձ ունիվերս ղրկի: Ես ի՞նչ անեմ: Ուզում եմ Վանին բերել տամ. բոլ ա (բավական է) որքան հուսում առավ: Հայր սուրբը, հախ աստծու (ճիշտն ասած) իմ ղոլը (կողմը) խոսաց: (Ա Սաք, ասեց, թե որ փող չունես, գիմնազի հուսումն էլ ա բավական, գրի թող գա: Էն ա, ես էլ գրեցի: Ամա դե Վանին թարսի ձին նստեց, էլ վեր չէկավ (հակառակվեց): «Ա հեր, գրում ա ինձ, դու մի բաղ ես տնկել, պահել, բջարել (մշակել), ծառերը հասցրել, մին ջուր տվել ես, մնացել ա մեկելը, որ բաղը հասնի, պտուղը քաղես: Հմի դու էդ ջուրը բեվախտ (անժամանակ) կտրում ես, պտուղը խակ թողնում, էդ աստոծ վեր չունի: Իմ ընկերները դիփ գնացին, որը Մոսկվա, որը Պետրբպոլկ, մենակ ես եմ մնացել ձեռս ծոցումս, գլուխս քաշ: Եկ էդ բանը դու մի անիլ, իմ վիզը մի կտրիլ...»: Դե, ձեզ եմ հարցնում, մի հեր, որ իրա մինուճար ռեխիցը ըսենց նամակ ստանա, ինչ կանի:

Իհարկե, բոլոր էլած-չէլածը կծախե, նրան կուղարկե, արագ պատասխանեց Պետրոսը:

Հա, ապրես, ես էլ ըդենց արի: Ինչ որ ջեբումս, յա սանդուխումս վաղ էր մնացել, էն հվաքեցի, ղրկեցի Վանուն, ասեցի, որդի, էս քե՝ ճնապարի խարջլուխ, գնա, աստոծ քե հետ. հուսումի ու ապրուստի փողն էլ կղրկեմ: Սրանից եղը՝ հորենական մի թթի բաղ ունինք, էն ծախեցի քաչալ Մոսու տղի վրեն ութ հարյուր մանեթի ու փողը յավաշ-յավաշ ղըրկեցի Վանուն: Էդ հերիք չարավ: Եդո մեր էս ջրի վրա մի ջաղաց ունինք, կըլի որ տեսած ըլիք:

Այո՛, տեսել ենք, հաստատեցի ես:

Հա, էն ջաղացը ծախեցի խոջա Մարութի վրեն չորս հարյուր մանեթի ու փողն էլ ղրկեցի Վանուն: Սա էլ իմ քոռ բախտիցը, ունիվերսի մի կլասումը իրար վրա, էրկու տարի մնաց: Գրում էր թե, միթում, վարժապետները փախլութին են արել (նախանձել էին), որ ինքն ըսենց լավ կարդում ա ու ջըգրու մին տարի ավելին պահել էն կլասումը: Ամա դե, ուրիշներն էլ ասել ին մեր կնքավորենց տղին թե

Վանին մի նախշուն աղջկա սեր ա տվել, եդիցն ընկել, դեսուդեն շուռ եկել, ու դրա համար ա կլասումը մնացել: Սուտն ու ղորթը աստոծ ա իմանում, անջախ էս կա, որ էդ մին տարվա խաթրին ջաղացի փողը քոռ ու փուչ էլավ (ոչնչացավ): Էն ա ջլիզ (բոլորովին) դայամիշ ի ըլել (հոգնել էի), գնացի հայր սուրբի մոտ, ասեցի, ա վարդապետ, ախր էլ դիմանալու ուժ չունեմ, ինչ անեմ: Ասեց, ա՛ Սաք, շատին դիմացել ես, քչին էլ դիմաց, ձիանդ ծախե, եզներդ ծախի, փող հասցրու: Դու սկի վախիլ մի, տղադ որ եդ դառնա, իրա սովորած թահրովը լավ բաղ էլ ա տնկելու, նոր դայդի (տեսակի) ջաղաց էլ ա շինելու, եզներդ ու ձիանըդ էլ ա շատացնելու: Ուսում առած տղան որ կա, Նոյի աղավնին ա, որ ձիթենու շիվը բերանումն եդ ա գալիս ու բախտավորութենի խաբարը բերում ծնողին: Ինչ երկարացնեմ, հայր սուրբի խոսքերը սիրտ տվին ինձ, ես էլ կցեցի առաջ ձիաներիցս, վերջը եզներիցս մի-մի ծախել ու փող ղրկել Վանին: Էն ա վերջին տարին էր. ամառը Վանին ամեն բան պտի վերջացներ ու եդ գար գեղը: Խոսք չկա, որ ես էլ օրեր եմ հմբարում (համարում) թե՝ եփ ա րեխեն եդ գալու, որ համ էս դժար հոգսիցը մեզ ազատի, համ էլ իրեն տենանք ու կարոտնիս առնենք:

Մին էլ էս ա մին գիր եմ ստանում թե՝ ա հեր, հուսումս վերջացրել պրծել եմ, ամա ըստեղ պարտք ունիմ, բաց չեն թողնում ինձ, որդիան որ ա, մին երկու հարյուր մանեթ հասցրու, որ էս պարտքը թափեմ ու գամ: Ղորթ ա, պարտքի անումը որ լսեցի սիրտս շատ կոտրվեց, ամա դե ասեցի դյուշան աղլամազ» (ընկնողը լաց չի լինիլ), թող էս մինն էլ յոլա տանենք: Գնացի խոջա Մարութից էրկու հարիր մանեթ պարտք արի, թումանին մի աբասի շահով (24%) ու մին ամիս ժամանակով: Էդ փողն էլ ղրկեցի Վանուն: Մտքումս էլ ասըմ ի թե, էս ա րեխես կգա, համ էս պարտքը կտա, համ էլ իրա ծռացրած բաները կդրստի: Հենց գիտում ի թե՝ Վանին որ իրա հուսումովը գեղ մտնի, էն ա փողը երկնքիցը վեր ա թափվիլու:

Անց կացավ մին ամիս, էրկու ամիս, Վանուցը խաբար չկա: Մեծ փքրի մեջ ընկա: Յարաբ էս ի՞նչ էավ. Վանին որդի մնաց, չըլի մի քամբախտութին պատահեց, յա չէ Պետըրպոլկումը բռնեցին րեխիս, չուն ըսենց բաներ շատ ի լսել: Մի խոսքով՝ սիրտս ճաքում էր:

Մին էլ էս ա մի օր Վանիցը գիր եմ ստանում, գրում ա թե՝ ա հեր, աչքդ լիս ըլի, էկել եմ Թիֆլիս ու մի սիրուն աղջկա հետ պսակվում եմ, հալի հալբաթ (անպատճառ) քո ու նանի օրհնությունը ղուշի թևովը հասցրու ինձ:

Ոնց որ մարդու գլխին մի թոփ տրաքի, ընենց էս խաբարը տրաքեց իմ գլխին ու ինձ շշմեցրեց: Սաղ մին քանի օր ես, կնիկս ջլիզ պելացել, ընկել ինք ըստեղերք, ոչ արածներս ինք իմանում, ոչ չարածներս: Շատ մտածելուց ու փիքր անելուց եդը՝ վեր եմ կենում գրում տղիս թե՝ «ա որդի, ախր հլա քո ինչ պսակվելու վախտն ա, հլա նոր ես հուսումդ վերջացրել, մին եկ քե տեսենք, մեր կարոտն առնենք, մեր ցավերիցը խոսանք ախր քու աբովն (հուսով) էլած չէլած ծախել, պարտքի տակ եմ ընկել, եկ իմ ցավին մի ճար արա, էլ եդ գնա պսակվիր»:

Հմի դուք փիքր կանեք թե՝ գեղացին իրա տղին պսակում ա տասնհինգ, յա չէ տասնվեց տարումը, էս խի Սաքի ապերը ուզում չէր, որ իրա քսանչորս տարեկան տղեն պսակվի: Դրա մանին, դրուստն ասած, մին էն էր, որ ես Թիֆլիսի աղջկերանցից վախում ի. չուն դրանցից շատ բաներ ի լսել: Մտածում ի թե չըլի՞ տղիս գլխից հանեն ու մին քոռ ու քաչալ զատ գլխին կապեն: Ջահելը, հո գիտա՞ք, քոռ կըլի. ասում ի ընենց ըլի որ մինուճար տղիս անբախտ չանեն, մին էլ էն էր, որ գիտում ի Վանին Թիֆլիսում պսակվելուց եդը էլ մեզ մոտ չի գալու, վաթանն (հայրենիքն) էլ ա մտքիցը գցելու, հոր տունն էլ: Էս ցավին, գիտա՞ք, դմանալ չէր ըլիլ:

Իմ գրին տղես պատասխանում ա թե՝ ա հեր, էս աղջկանը Պետրպոլկից եմ սեր տվել, ինչկլի հեդը չպսակվեմ կարալ չեմ գեղը գալ, հալի հալբաթ քու օրհնութինը ղրկի:

«Գրում եմ, ա՛ որդի, ախր մին ասես էլ ա՛ էդ ինչ աղջիկ ա: Ինչ ազգի որդի ա. հա՞յ ա, ռո՞ւս ա, ջհո՞ւդ ա: Ախր, ես ոնց իմ օրհնութինը ղրկեմ էն հարսին, որի էրեսը տեսել չեմ, ձենը լսել չեմ»: Գրում ա թե՝ ա հեր, խի՞ ես էդ բանը հարցնում. ես հո թուրքի, յա ջհուդի աղջիկ չեմ ուզելու: Գիտում չե՞ս, որ ուզածս քրիստոնի աղջիկ կըլի: Ամա մի երկու օր եդը մեր կնքավորենց տղեն գրում ա (չուն նրան էլ ի հարցրել), թե՝ ասիլ չես, Վանին պսակվում ա մի գյուրջու (վրացու) աղջկա հետ...:

Հմի ձեզ եմ հարցնում, մին հեր, որ էս բանը լսի ինչ կանի: Հը՞: Ամա ո՞ւր եմ հարցնում, դուք ի՞նչ գիտաք: Էն ա կցեցի գլխիս վայ տալն ու ախ ու վաշ անիլը: Ամա դե էլ ո՞ւր կհասներ: Բանը բանից անցել էր:

Ուրեմն քո օրհնությունը չուղարկեցի՞ր, հարցրի ես:

Չէ, չղարկեցի: Ամա ինքը առանց դրան էլ պսակվել պրծել էր: Եդո էլ ինձ վրա ուռած, փքված գրում ա թե՝ «ա՛ հեր, դու որ քու օրհնութինը ինձ չղարկեցիր ու էս իշխան մարդկանց միջումն ինձ խայտառակեցիր, էլ հորես դենը ես քու որդին չեմ»:

Հետո դու ի՞նչ պատասխանեցիր:

Ոչինչ: Մենակ էն արի, որ նրա գիրը վեր կալա, գնացի վանքը: Էն վախտը Օսեփ հայր սուրբը մեռել էր: Գնացի նրա գերեզմանի ռաջին չոքեցի, քարը համբուրեցի ու լաց ըլելով ասեցի «Օսեփ հայր սուրբ, լուս դառնաս դու հողովդ ու քարովդ, ախր դու ինձ ասացիր, որ իմ Վանին Նոյի աղավնին ա, էս ա ձիթենու շիվը բերանում եդ ա գալու, որ բախտավորութենի խաբարը բերի ինձ. բա խի՞ ըտենց չիլավ...ախր Վանին հմի նոյի ագռավն ա դառել, ջամդաքի վրա նստել ա՝ ու էլ եդ չի գալի. սրա ճարն ի՞նչ կըլի...»:

Ծերունին լռեց, կարծես այլևս չկամենալով խոսել:

Բայց Պետրոսը, որ ըստ երևույթին, չէր նկատում ծերունու հուզմունքը, հարցրեց.

Վերջը ինչպե՞ս եղավ, տղադ պսակվելուց հետո գյուղը չեկա՞վ:

Եկավ հինգ տարուց ետը, կնիկն էլ բերավ, մի երեք էլ գյուրջու ճտեր հետը:

Հետո՞:

Հետո էլ ինչ. մի տասն օր մնաց, սաքի (որպես թե) մեր խաթրը առնիլու համար ու էլ եդ գնաց:

Բաս ըսկի չհարցրիր, թե ինչու է այդ աղջկա հետ պսակվել:

Հարցրի: Ասեց սրա հերը ընտի մեծ ղուլուղում (պաշտոնի մեջ) ա, պսակվեցի որ ինձ էլ կռան տակը քաշի ու մենծ մարդկանց ջարգը (շարքը) գցի:

Այնուամենայնիվ, դու քո նպատակին հասել ես, տղիդ բարձր ուսում ես տվել՝ ու Թիֆլիսի նման քաղաքում հայտնի մարդկանց շարքը գցել՝ այդ էլ մեծ բան է, նկատեց ընկերս:

Ա քե մատաղ, բա ես իմ էլած-չելածը փչացրել, Վանին հուսում իմ տվել, որ նա Թիֆլիսի՞ն պետք գա. խի, Թիֆլիսումը նրա նմանները քիչ կան. յա չէ իմ սիրտը շա՞տ էր ցավում էդ բարբադի (քանդվածի) համար... Ես իմ տղին հուսում եմ տվել, որ առաջ իմ օջախը շինի, իմ հանգած ճրագը վառի, իմ տունը հարս բերիլով՝ ինձ ու իմ պառավին ուրախացնի, եղն էլ իրա հուսումով էս խավար գեղը լուսավորի, մեր խեղճ ու հայվան շինականին կոռից, բեգառից ազատի... Թիֆլիսումը Վանին թող հենց երկնքից հրեշտակ վեր բերի, ինձ ի՞նչ... հրեն, որ երկրում, որ լուսավոր, յա չէ փանգ ու փիլով (հնարագետ) մարդ կա, հենց դպա Թիֆլիս ա վազ տալի, դուք մեր էս խեղճ գեղի դարդը քաշեցեք, որ ոչ տեր ունի, ոչ սրտացավ...: Վանին գոնե փող ուղարկո՞ւմ է քեզ, հարցրի ես ծերունուն:

Չէ, չի ղարկում, մեր կնքավորի տղին ասել ա թե ապուն ասա ինձանից նեղանա ոչ. խարջս շատ ա մենծ. տարին 3 4 հազար մանեթը հերիք չանում, ես էլ անջախ (հազիվ) էդքան եմ աշխատում:

Իսկ խոջա Մարութի պարտքը վճարե՞ց:

Չէ՛, քեզ մատաղ, նրան էլ երկու գոմշակովս տվի, հոգիս ազատեցի:

Հապա երբ այստեղ եկավ, իսկի չասացիր, թե ինչո՞ւ գոնե յուր համար արածդ պարտքը չի վճարում:

Ասեցի, ասում ա, ա հեր դիփ մեկ չի՞, ինչ ունես չունես ծախիր կեր. եփ որ կդարտակվես, կգաս Թիֆլիս իմ տանը կապրես:

Դու ի՞նչ ասեցիր:

Ասեցի, յանղլիշ ես, որդի, որ իմանամ քաղցած մեռնելու եմ իմ ոտն իմ գեղիցը դուրս չեմ դնիլ, ըստեղ ծնվել եմ, ըստեղ էլ պտի մեռնեմ, իրա վաթանը մոռացողը, հոր տունն աչքից ու մտքից քցողը մարդ չի, հայվան ա:

Եվ այդ դրության մեջ ուրեմն դու ոչ մի մխիթարություն չունի՞ս, հարցրի ես ծերունուն, ի սրտե ցավակցելով նրան:

Ունեմ, ո՞նց չունեմ, պատասխանեց նա հուզված ձայնով իմ մխիթարությունն էլ էն ա, որ եվ լսում եմ թե մեր գեղականին մինը ուզում ա իրա տղին քաղաք ղրկի հուսում առնելու, էն սհաթին գնում եմ կոնիցը բռնում, բերում մեր հայաթումը կանգնեցնում ու ասում, – տես, որդի, էս Վեդունց Սարգսի շեն օջախն ա, որ էսօր վերանա (ավերակ) ա դառել: Ա՛յ, տես, կտուրը ծռվել ա, պեշերը թափվել են, գերանը կախ ա ընկել, գյումը դատարկվել ա, ու մեզ թացան (թաց կերակուր) տվողը մի էծ (այծ) ա մնացել... Մենք էլ, տեսնում ես, մարդ ու կնիկ ծերացել մնացել ենք անտեր, ոչ ձեռք կա, որ մեր դուռը բանա, ոչ ձեն կա, որ սիրտներս ուրախացնի... Էս դիփ նրա մեղն ա, որ ես իմ տղին հուսումի ղրկեցի... Վախի՛ր էդ բանիցը, որդի, ըեխեդ քու կըշտին պահիր, տանիցդ մի հեռացնիր, որ իմ Վանու նման Նոյի ագռավ չդառնա...:

Բայց դուք հո դրանով չարիք եք գործում, բացականչեց Պետրոսը վրդովվելով:

Չարիք խի՞ եմ գործում, պատասխանեց ծերունին եռանդով, լավն էն չի որ մեր գեղը հիսուն վար անող տղամարդ ավելի ունենա, քան թե հարիր Նոյի ագռավ: Վար անողը հլա հաց կբերի տուն, քյուլփաթի (զավակների) ռուզին կըշտացնի. Նոյի ագռավն ինչի՞ ա պետք: Յա չէ, հո՞վ ա մեղավոր, որ ես հմի ըսենց եմ խրատում մարդկանց, ես, թե՝ իմ տղեն: Մի սհաթ առաջ գնացել եք տեր Մուկուչի յախեն (օձիքը) բռնել թե էս խի դու գիտուն չես, էս խի՞ տղերանցդ հուսումի չես ղրկել... Խեղճն էն սհաթին եկավ ինձ գանգատվեց: . Ասեցի, ո՞ւր ա, էդ շլյապավոր տղերանց մի ղրկի ըստեղ՝ ես էլ նրանց իմ հարցմունքն անեմ: Հմի հազիր եկել եք. խնդրում, եմ որ ասեք. հո՞վ ա մեղավոր, որ գեղի քահանան տեր Մուկուչն ա, հո՞վ ա մեղավոր, որ եղցու առաջը անապատ ա. հո՞վ ա մեղավոր, որ գեղը կեղտոտ ա, տները տափից կպած, հայաթները թրքով լիքը, քուչեքը ծուռումուռ... ասեցեք տենամ, հո՞վ ա մեղավոր, խեղճ գեղակա՞նը, թե Նոյի ագռավները: Ախր ինչկլի հմի էս գեղարանքից մի տասը, քսան տղա գնացել են

հուսում առել, լուսավորվել, հմի ո՞ւր են, ընչի նրանցից մինն ու մինը եդ չեկավ, որ իրա հոր օջախը վառի, իրա վաթանը պայծառացնի, որ գեղացին հենց մին օրինակ էլ ա տեսնի ու ասի թե՝ «ղորթ ա, հուսումը լավ բան ա, եկեք մենք քար ու քացախ ուտենք, ամա մեր րեխանց հուսում տանք, լուսավորենք...»:

Ծերունին լռեց, իսկ մենք պատասխանելու ոչինչ չունեինք:

Բարեբախտաբար այդ միջոցին պարտիզի դռնում երևաց մեր հյուրընկալը, որ եկել էր մեզ ճաշի կանչելու: Օգուտ քաղելով առիթից, վեր կացանք տեղից և ողջունելով ծերունուն, հեռացանք ծանր տպավորության տակ:

Երբ իջնում էինք սոսիների զառիվայրով՝ հարցրի Պետրոսին թե՝ արդյոք հիշո՞ւմ է այն խոսքը, որ ասում էի թե «կգտնվին հոգվո կամ մտքի աչքերով հիվանդներ, որոնք խավարը կորոնեն իբրև դեղ, իրենց ցավը մեղմելու համար»:

Հիշում եմ, ասաց նա, և այս ծերունին այդ հիվանդներից մինն է:

Այո, սակայն նրա միտքն առողջ և հոգին կայտառ է եղել, երկուսն էլ հիվանդացրել է լուսավոր որդին, հարեցի ես:

Անշուշտ, պատասխանեց ընկերս և այս անգամ արդեն խոր համոզմունքով: